

Բաժանորդագրին կԱՆԻՆԻՆ՝ Թուրքիոյ համար տարեկան 50 զրշ, Ռուսիոյ համար 5 ռուբլի, ուրիշ երկրներու համար 12 ֆր:

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրութիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան նամակագրոշմ՝ կ'ընդունուի՝ 1 զրշ: Նոյնը 31 փարայի հաշւով, կամ 100 զրուշի փոխարէն 115 զրշ:

ԾԱՂԻԿԻ Վերաբերեալ ամէն գործի համար Գիմեւ:

Առ ՏԵՐԵՐԻ-Հրատարակիչ
ՅՈՎՆԱՆ Պ. ՓԱՆԱԳՅԱՆՅԱՆ
Պոլիս, Պաշէ-Կապու, Թաշ Խան, Բիւ 50

ԾԱՂԻԿ

Լ Ր Ա Պ Ի Ր

درعليه ده بفتح قوسنده طاش خاندده

ه. نومروده «زاغيك» غزتي سي مديري

بالا قاشيان حوونان

S'adresser à

HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien «Dzaghik»,

Rue Bahtché-Kapou, Tach Han, 50

CONSTANTINOPLE

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 38

Շ Ա Բ Ա Թ

4 ՅՈՒԼԻՍ 1892

ՎԻՃԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՓԱԿՈՒՄՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆՑ խնդրոյն առթիւ մեր կրկին պատասխանները թէև չարուած պատրաստ էին, բայց մեզ դէմ եղած բողոքի մը հետեւանօք՝ վերջին պահուն Տպագրական Տեսչութեան մեզ հաղորդուած պատուէրին համաձայն, զայնս հրատարակելն անկարելի եղաւ. այս պատճառաւ «Ծաղիկ»-ի այս աւուր թիւը կը հրատարակուի միայն ութ երես, փոխանակ 12 ի:

Յ. Գ. ՓԱՆԱԳՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ս. Երուսաղէմայ Լուսարարապետ Գեր. Տ. Սահակ եպիս. Խապայեան յառաջիկայ չորեքշաբթի օր պիտի մեկնի մայրաքաղաքէս յիւր պաշտօնատեղին:

— Կեսարիոյ Առաջնորդ Գեր. Տըրդատ վարդ. Պալեան չորեքշաբթի օր մայրաքաղաքէս մեկնեցաւ ի Զմիւռնիա ուրիշ Մաղնիսա պիտի երթայ յայցելութիւն իւր քոյրերուն եւ ամսէ մը պիտի վերադառնայ ի Պոլիս:

— Գեր. Եղիշի եպիս. Ապահունի Գում-գաբուի գրտի Ս. Յարութիւն եկեղեցւոյ քարոզիչ կարգուած է:

— Խառն ժողովը վաւերացուց Տըրապիզոնի առաջնորդական ընտրութիւնը յանձին Գեր. Եղիշէ վարդ. Այվազեանի, վաւերացուց նաև Ամասիոյ Կրօն. եւ Քաղ. ժողովոյ ընտրութիւնը եւ ընդունեց Սղերդի Պատր. Փոխառնորդ Արթ. Խորէն վարդ. Շահնազարեանի հրաժարականը:

— Յայտնի է թէ, Հանգուցեալ Տ. Տ. Մակարայ օրով Գէորգեան ձեմարանի մի քանի ուսանողք իրենց ըմբոստութեան համար հեռացուցուած էին ձեմարանէն. Նոքա աղետաբերով դիմած էին յետոյ Սրբազան Տեղակալին

խնդրելով որ վերստին ընդունուին ձեմարան, աւարտեն չրջանը եւ սարկաւազ ձեռնագրուին: Նոր-Դարէն կ'իմանամք թէ այդ ձեմարանականք այս տարի աւարտած են իրենց չրջանը, բայց չեն ուզած սարկաւազ ձեռնագրուիլ:

— Գէորգեան ձեմարանի տեսուչ Արիստակէս եպիս. Սեդրակեանի առաջարկութեամբ, Սինոդի Ատենապետի Տեղակալ Երեմիա եպիսկոպոս իւր պաշտօնէն հրաժարեցուցեր է ձեմարանի ուսուցիչ գիտնական մանկավարժ Պ. Սեդրակ Մանգինեացը:

— «Մաղիկ»-ի վերջին երեք թիւերով հրատարակեալ Գէորգ-Դպրի Կենսագրութեան առթիւ, բանասէր ազգային մը հետեւեալ դիտողութիւնը զրկած է մեզ.

«Թէ Վենետիկ տպուած Հնախօսութեան եւ Օսմ. Պատմութեան հեղինակը Գէորգ-Դպրին է, ասոր ամենեւին տարակոյտ չկայ. ասոր ապացոյց են Հնախօսութեան մէջ Օսմ. հաղուագիտ պատմիչներէն բերուած վկայութիւնները, վասն զի ո'չ միայն այս գրքեր Վենետիկացի թանգարանին մէջ չէին գտնուեր, այլ եւ նոքա այդ գրքերուն անունն անգամ լսած չէին: Դարապատումին մէջ ամբողջ հատուածներ կան առնուած Ռէսմի Ահմէտ էֆէնտիի եւ ուրիշ պատմական գրքերէն: Ուստի Պատմութիւն իւր մահուան անկողնոյն մէջ՝ իրաւամբ ըսաւ բարեկամացը թէ, «Ի Վենետիկ տպեալ որ գրքին մէջ որ ի Թուակաւինն ինքնէն բառերը կը տեսնէք, այն իմ հեղինակութիւնս է. թէև ուրիշ շատ հեղինակութիւններ ալ ունիմ, բայց չպիտի կրնաք գիտնալ իմ ըլլալը. միայն ձեզի մխիթարանք ըլլալու համար կ'ըսեմ որ ի Թուակաւինն ինքնէն բառերը կրող գրքերն ապահով կերպով իմ համարեցէք:»

— Հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդեն մեզ Արմտանի Թուղթ գիւղի մասին:

«Թուղթ գիւղ 1 1/2 ժամ հեռի է Արմտանէն. ունի 70 տուն հայ եւ 25 տուն Թուրք բնակիչ: 15 տարիէ ի վեր դըպրոց չունի գիւղը. հազիւ ձմեռները մէկ երկու ամիս կը կարգան տըսյք՝ պատահական վարժապետներու կամ տիրացուներու քով: 80—85 տարեկան քահանայ մ'ունէինք, մայիս 27ին մեռաւ. այժմ գիւղն առանց քահանայի մնացած է եւ քահանայացու ալ չկայ. ծնունդք եղած են, ամիսներով առանց մկրտութեան մնացած են. մեռելք եղած են որ օրերով անթաղ մնացած են, մինչև որ ուրիշ տեղէ քահանայ մը գայ. այս բան կը պատահի մահաւանդ աղքատաց որոնք կարողութիւն չունին ուրիշ տեղէ քահանայ հրաւիրելու: Այնքան ետ մնացած է գիւղը ուսման մէջ որ 70 տունէն քահանայացու մը չեն կարող գտնել այսօր. եթէ այս անհոգութիւնը շարունակեն եւ դպրոցի մը ճարը չտեսնեն գիւղացիք, տակաւին շատ ժամանակ քահանայ չպիտի կրնան ունենալ եւ գուցէ կամայ կամայ իրենց հարց կրօնքն ալ պիտի մոռնան: Քահանային վախճանումէն ի վեր եկեղեցին բոլորովին դոցուած է. վասն զի գիւղին երկու տիրացուք եւս՝ որոնք եկեղեցւոյն մէջ գէթ «Հայր մեր» մը՝ սեւը կրնային ծառայել, մայրաքաղաքս եկած են այժմ: Մայրաքաղաքս կան 30 գիւղացիք որոնք կը ցանկան գիւղին մէջ դպրոց բանալու ձեռնարկութիւն մ'ընել, սակայն ցաւալի է ըսել որ իրենց մէջ կան մի քանի մարդիկ որոնք կ'ուզեն այդ գործին գէմ արգելք ըլլալ: Փափաքելի էր որ մասնաւոր հաշիւները մէկ կողմ թողլով, իրենց մէջ միաբանէին եւ դպրոցի բացման գործն ի գլուխ հանէին:»

— Իւսկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյ Սուճեան Տէր Սահակ քահանայն հինգշաբթի օր ի Տէր հանգեաւ, ի հասակի 60 ամաց: Օծման եւ յուղարկաւորութեան արարողութիւնք կատարուեցան երէկ:

— Այվազեան Աբրահամ էֆէնտի պատրաստած ճորդ Կենսագրութիւնը պիտի հրատարակուի «Ծաղիկ»-ի յառաջիկայ թուով:

Հ Ն Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

Անցեալ շաբաթու թիւ 37 Ծաղիկի մէջ գրեցինք մանրամասնաբար Ս. Էջմիածնայ Զեռագիր Աւետարանի մասին. այս անգամ ևս կ'ուզեմք գրել Տփլիսի Մոզնոյի Ս. Գէորգ եկեղեցւոյն սեփական Զեռագիր Աւետարանի նկատմամբ, որ թէև չունի Գլխաւոր յիշատակարան՝ վերջին երեք թերթերուն ինկած լինելուն պատճառաւ, և սակայն իւր դիրքով, Մագաղաթեայ թերթերով և գրչութեամբ, գրեթէ յար և նման է Ս. Էջմիածնայ յիշեալ աւետարանին, և կարծես հնութեամբ ալ շատ ետ չը կրնար մնալ նոյնէն:

Յիշեալ Ս. Գէորգ եկեղեցւոյ Զեռագիր Աւետարանին կազմով չափն է, երկարութիւն 44 հարկւորդամէթր, լայնութիւն 33.5 հրգմ. և հաստութիւն 10.5 հրգմ. և կը բաղկանայ 378 մագաղաթեայ թերթերէ և կամ 756 էջերէ. ՄեծՈւթիւնն է 42×32.5 հարկւորդամէթր, Նիւթն ընտիր մագաղաթ. ԳրՈւթիւնն երկսիւնակ 31×23 հրգմ. Սիւնակաց միջև եղած դատարկ միջոցն է 3 հրգմ. ԳիրՈւ երկաթագիր՝ Մետրովեան տառեր. Լ տառի տեղ գործածուած է Ղ տառն, և քանի մը տեղեր պատահեցայ նաև որ թէ շաղկապին ուղղագրութիւնն են գրով գրուած էր: Իւրաքանչիւր էջի ՏՈՂԵՐՆ են 15. ԿՍԶՄը հին արեւելեան, տախտակեայ թաւշապատ. երկու արտաքին երեսներն արծաթապատուած են. արծաթի վրայ քանդակագործուած առաջին երեսի պատկերներն են՝ մէջ տեղը Քրիստոս և չորս անկիւններն չորս Աւետարանիչք. երկրորդ երեսին՝ Ս. Աստուածածինն սրակաւոր, վերեն Հայր Աստուած և Որդին Աստուծոյ, և վարն երկու Հրեշտակներ. սոյն պատկերք արհեստական տեսակէտով ալ լաւ գործեր են. ԿՍԶՄի ներքին երկու երեսներն մութ գունաւոր թղթեր վաղցուած են. ՀԱՆԳԱՄԱՆՔը թէև գեղեցիկ է և լաւ պահուած, սակայն վերջի երեք թերթ մագաղաթներն ինկած են, որով գլխաւոր յիշատակարանն ևս կորսուած, և որոց տեղ նոր թղթեր փակցուած և Աւետարանի պակաս մընացածներն բոլորագրով լրացուցած են. ԴԱՏԱՐԿ են սկիզբէն 3 թերթեր թուղթ. և թղ. 1բ, 2ա, 3բ, 4ա, 5բ, 6ա, 7բ, 8ա, 9բ, 10ա, 11բ, 12ա, 13բ, 14ա, 15բ, 16ա, 17բ, 18ա, 19բ, 20ա, 21բ, 22ա, 124ա, 187ա, և վերջէն մէկ թերթ թուղթ. ԵԶԵՐԱԶԱՐԴ Զունի: Գլխոց սկզբնագրերն են ԾԱՂԿԱԳԻՐ ուղղակի տողն ոսկէգիր. Պատկերաց, Խորանաց, և Յիւսակագրութեանց վը-

րայ հետեւեալ կարգաւ կը խօսինք.

Թղ. 1ա, 2բ, 3ա, երեք խորանք եւսերիա,

Թղ. 4բ, 5ա, 6բ, 7ա, 8բ, 9ա, 10բ, եօթն խորանք Համաձայնութեանց,

Թղ. 11ա, Պատկեր Աւետման, եւ այցելութիւն առ Եղիսաբէթ. Աւետման պատկերի մէջ Հրեշտակն կը տխուրանազրէ,

Թղ. 12բ, Պատկեր Ծննդեան, եւ երկրպագութիւն Մոգուց,

Թղ. 13ա, Պատկեր Ընծայման. սոյն պատկերի մէջ գրուած է «Այս տղայ է աւարիչ եղինից եւ երկրի»:

Թղ. 14բ, Պատկեր Մկրտութեան,

Թղ. 15ա, Պատկեր Այլակերպութեան,

Թղ. 16բ, Պատկեր յարութեան Ղազարու,

Թղ. 17ա, Պատկեր աւր արմաւենեաց.

Թղ. 18բ, Պատկեր Բաղարջակերաց ի վերնատուն.

Թղ. 19ա, Պատկեր խաչելութեան. սոյն պատկերի մէջ ևս գրուած է «Ահա մայր քո, ահա որդի քո»,

Թղ. 20, Պատկեր Համբարձման,

Թղ. 21ա, Պատկեր Հոգեգալտեան (Պէնտէկոստէի).

Թղ. 22բ, Պատկեր Մատթէոսի Աւետարանին,

Թղ. 23ա, խորան և Մատթէոսի Աւետարան. ա, բ, գ երեսներն ամբողջովին ոսկէգիր են. Թղ. 123բ կը վերջանայ Մատթէոսի Աւետարանն:

Թղ. 123բ. «Աւետարան ըստ Մատթէոսի, Աւետարանս Մատթէոսի գրեցաւ «յեմ քաղաքի ի լեզու Եբրայեցի զինի Լ ամի համբաւնալոյն Տեառն եւ է գլուխս յԾԵ, վկայութիւնս ԼԲ. տունս ՍՈ. Մատթէոս Նրգ կենաց.»

«Յովաննէսի մեղաւորի գրողի գրոցս ողորմեա Ած ի քո գալտեանդ, ամէն.»

Թղ. 124բ. Պատկեր Մարկոսի Աւետարանին.

Թղ. 125ա, խորան և Աւետարան ըստ Մարկոսի, առաջին երեսն ամբողջովին ոսկէգիր, Թղ. 186ա, կը վերջանայ Մարկոսի Աւետարանն:

Թղ. 186ա, «Աւետարան ըստ Մարկոսի, Մարկոս Բարձ ու պաւսուէր, Մարկոս էր ի յեւթանասնից անտի, և յեւտոյ աշակերտեցաւ Պետրոսի վիմի, և «նորին հրամանաւ գրեաց զԱւետարանս իւր, յԱլեքսանդր քաղաքի ի լեզու Եգիպտացի, զինի ժե ամի համբաւնալոյ Փրկչին. ունի գլուխս ՄԼԳ. «վկայութիւնս ժե, Աւետարանս տունս «ՌՈ.»

«Յովաննէսի մեղաւորի գրողի գրոցս ողորմեա Ած. ամէն. Տէր տուր Դաւ. «թի յարութիւն կենաց, ամէն. Նի-

«ղորգաեմրոզո ծաւս(1). (Այս տեղ մի «մեծագիր կայ որ կը կարդացուի Յո-«հաննէս):»

Թղ. 187բ. Պատկեր Ղուկասու Աւետարանին.

Թղ. 188ա, խորան և Աւետարան ըստ Ղուկասու, առաջին երեսն ամբողջովին ոսկէգիր. Թղ. 297ա. կը վերջանայ Ղուկասու Աւետարան,

Թղ. 297ա. «Աւետարան ըստ Ղուկայ, Ղուկաս գրեաց զԱւետարանս «իւր հրամանաւ Պաւլոսի յԱնտիոք քա-«ղաքի ի լեզու Անտիոքացի զինի ժե «ամի համբաւնալոյ Տն. ունի գլուխս «ՅԽԲ. վկայութիւն ժե, տունս ՍՊ. «Ղուկաս Յարութիւն. Տր Յո ողորմեա «գրողի գրոցս. (այս տեղ ևս մենագիր մը կայ, զոր կը կարդամ ամէն):»

Թղ. 297ա² (նոտրգրով այլ գրիչ յի-«շատակարան մը) — «Ի Ժամանակս «Փայտ շահութեան Ղուկայ Բանիմ, «և ի Թագաւորութեան Վրաց Սիմոն «Թագրին որ նայ աւերաց Լուսի և զՎա-«նուրայս և գերացոյց բազում անաւ-«թքս և զգրանքս եկեղեցեաց: Ես «Տաւրեցի Պարոն Ափիլոյի որդի պա-«րոն Բային դուրս ի հալալ արդեանց «իմոց գնեցի, Սբ Աւետարանս, և զար-«ծայթած տրայկալքն Հաղբատայ, այլ «և ետու ի դուռն Հաղբայ Սբ Նշանին «վասն յիշատակ հոգւոյ իմոյ և ծնաւ-«ւոյն իմոյ հաւրն իմ պարոն Ափիլոյին «և մաւրն իմ պր Գալարգանդին, և «ամուսնոյն իմոյ պրն Շահուրբանին և «որդոցն իմոց արեւաւորութեան Զու-«րապին, Դուկիլանին, և դստերացն «իմ Ասրանդարին, և Թեքոյին, և այլ «մերձաւորացն իմոց կենդանեաց և «նշեցեցոյ, աղաչեմք զձեզ հայրա-«պետք, կրանաւորք որք աւգտիք, «ի Սբ Աւետարանիս կարդալով կամ «աւրենակելով. յիշեսիք ի մաքրափայլ «աղաթս ձեր, պարոն Բային դուրն, «և զծնաւդսն իւր, և զմերձաւորսն ա-«մենայն. նայ որ առատն է ի դուրսն «ամենեցուն ձեզ և մեզ ողորմեացի ի «միւսանգամ գալտեան իւրում, ա-«մէն. Գիտութիւն լիցի ձեզ սբ հայրք «յեղբարք, որ Ժամ գերեցաւ Սբ Ա-«ւետարանս գնաց հասաւ ի Գանջայ. «Այ ողորմութեամբ և յետս դարձուց-«եալ գնեցայք Սբ Աւետարանս, վասն «յուսոյ արքայութեան և անմահու-«թեան զոր կու հրամայեն Սբ Առաք-«եալքն, թէ երանի որ ունիցի զաւակ «ի Սիոն կամ ընդանի վերինն եղմ. վա-«սըն այն յուսովն գնեցի, Գ. Թու. «զԱւետարանս և զգրայկալքս, և ե-

(1) Սոյն վերջին պարբերութիւնը եթէ վերջին գիրէն սկսինք, կը կարդացուի. «Տէր Աստուած ողորմեա գրողին»:

« տու հոգեւոր զաւակ , ետ Սր Նշանիս ,
« դուք այլ մի բերան ողորմի ասէք
« պարոն Բայենսուրին : »

ԹՂ. 297թ. Պատկեր Յովհաննու Ա-
ւետարանին . սոյն պատկերի վարի կող-
մը մի այլ պատկեր ևս կայ որոյ վրայ
գրուած է . « Պոռխոնու առաքիւն Յով-
հաննու : »

ԹՂ. 298ա , Խորան և Աւետարան
ըստ Յովհաննու , առաջին երեսն ամ-
բողովին ոսկեգիր . ԹՂ. 377ա կը վեր-
ջանայ Յովհաննու Աւետարանն .

ԹՂ. 377ա , (բոլորգիր) « Յովհաննէս
« Աւետարանիչն , որ և որդի որոտման
« զվերինն որոտալով , պատմեաց մեզ
« սա զինի ԾԳ ամի համարունալոյ փրկ-
« չին , գրեաց զԱւետարանս իւր յԵ-
« փեսոս քաղաքին ի խնդրոյ եկեղեց-
« ւոյն Ասիոյ ի լեզու Յոյն , և է գլուխս
« ՄԼԲ , վկայութիւնս ԺԵ , տունս ՌՊ ,
« Միանգամայն չորեքան Աւետարանս ,
« Գլուխք ՌՃԿԲ (=1162) , Վկայութիւն
« ՀԹ (=79) , Տունք ՓՊ (=8800) : »

Այս Յովհաննէս արծուանման ,
Թռեալ մտաւք անհոսական ,
Առ ի պատմել բանիւ մարդկան ,
Չանձառն էիցըս հանրական : »

ԹՂ. 377բ. (նստրգիր) « Ես մեղաւոր
« Թուամնի որդի Բարսեղ եպս գրեցի
« ԹՎին ՌՃԻԼ (=1679) : » Այս տեղ ՎՃ-
րացերէն գրուած երկու տող գիր կայ .

ԹՂ. 377բ. (բոլորադիր) « Աւրհնու-
« թիւն գոհութիւն բարեբանութիւն
« զթածին ողորմածին և մարգարիին
« Այ Հօր Այ Որդւոյ Այ Հոգւոյն Սրբոյ ,
« յամենայն իւրական արարածոց յիմա-
« նալեաց և ի զգալեացս այժմ և անդրաւ
« յօրտենին (=յաւիտենին) ամէն . Ո-

« րոյ շնորհաւք աւարտեցաւ եռահրաշ
« և հոգեւորաբար Աւետարանս , զոր է
« չաղկապեալ Աւետարանչացն ըստ
« բազմերանկ դուռնոց ի մի ոստայնան-
« կելով հանձար . զոր արուեստակեալ
« անուշոցաց ծաղկանց , և զեփեցական
« կազութեամբ , որ ըստ հոգւոյն յատ-
« կութեան խմանի զանազան որակու-
« թեամբ գաղափարելով ըստ յո-
« ճունց արժիացելոցն դասակցութեանց
« առ ի արմարումն եկեղեցւոյ յաւդիւ
« խաղաղութեան գլխոցն պատշաճեալ .
« Զի յայսմանէ կատարելութիւն չորք
« աւետարանք ի բազում պատճառէ ,
« չորեքկերպեան զկենդանիք , Մարդ ,
« Ասիւծ , Եղն , Արծիւ . չորս գետք
« բղխեալ ի դրախտէն Փետուն , Գեհոն ,
« Տիգրիս , Եւփրատիս , չորս ծաղ ափե-
« զերաց Արեւելք , Արեւմուտք , Հիւ-
« սիս , Հարաւ . չորս բանք Աւետարա-
« նիս՝ պատգամ և պատուիրան , սպառ-
« նալիք և աւետիք . չորս տարերք աշ-
« խարհի՝ հող և Զուր , աւդ և հուր ,

« Թշնամիք և անհաշտելիք , և սիրելիք
« անքակտելիք . չորս անկեանք և չորս
« եղջիւրք սեղանոյն . չորս առաքիւնու-
« թիւնք , հոգւոյ խոհեմութիւն , արի-
« ութիւն , ողջախոհութիւն , արդա-
« րութիւն . չորս չորք գիր անուան Ա-
« մենասուրբ Երրորդութեան , Հայր
« Որդի Հոգի . չորս բանիւ խաւսէ Ա-
«ւետարանս , հրամանաւ և խրատով
« աւրեանակաւ և վկայութեամբ . և այլ
« բազում պատճառք են յորս գաղա-
« փարեն չորեքեան Աւետարանքս : Ո-
« րոյ ցանկացող եղեալ այսմ պայծառ
« գանձին Ածառէր . և բարեմիտ : »

« Փառք Համագոյ և Միանական
« Անբաժանելի Հաւր և Որդոյ և Հո-
« գոյն Սրբոյ ամէն . »

« Կատարեցաւ խնդրածս Յաւենիս
« եպիս և միարանացն ամենեքեան որ
« է Առաջնորդ Հախապտայ Սր Նշանիս ,
« յիշեցէք առ Ած ողորմի ասացէք Ած
« զեծս յիշէ ի միւսանգամ գալըստեան
« իւրոյ . Դարձեալ յիշեցէք հոգեւոր
« մայր իւր Աղիզ ապաշխարողս որ շատ
« աղիտք ունի այս Սրոց դուանս յիշե-
« ցէք և Ած ողորմի ասացէք Ած զի
« ձեզ յիշէ ամէն : Զվերջին կազմողս
« մեղսյապարտ և սուտ անուն Գարեանէ
« ապաշխարողս յիշեցէք և Ած զի ձեզ
« յիշէ . եղբարք իմ Թողութիւն շնորհե-
« ցէք էք ինձ աչքս վատայ տեսեր խիստ
« խաղաղութիւն էր ժամանակս թգօ-
« րութիւն (=թագաւորութիւն) Առ
« ես տում խանին էր Առաջնորդու-
« թիւն էջմիածնայ Տն Յակոբայ որ ե-
« րեկ Վրաստուն Թիպլիս քաղաքն է
« ամիս եկաց . եպսկուքն ամենեքեան
« յինքեան ունէր չէն կենայ քաղաքն
« դարձաւ ուրախութեամբ աթոռն իւր
« որ չինել էր Յաւենիս եպիսոս եկեղե-
« ցիքն իւր և խիստ աշխատեցան ամե-
« նեքեան յիշեցէք առ Ած ողորմի ստա-
« ցէք Ած զձեզ յիշէ անգղին բարի ա-
« մէն , Հայր մեր . . . »

ԹՂ. 378ա , (Այլ բոլորադիր բայց
ոչ մաքուր) . Ի առաջնորդութեան « Ա-
« կընցի Մինաս Վարդապետին և Աթո-
« ռակալ նորին Թիֆլիսցի Գրիգոր Վար-
« դապետին ես Ապովս ի գիւղէն Զիթ-
« հանքու եկի ի Ախրաւս վանքն Սր
« Նշանին երկրպագութիւն տեսա զայս
« Սր Աւետարան առ ի ինձ և իմ կողմ-
« ցուն Շահրխսանին որ առ Քս փոխեալ
« է անջնջելի յիշատակ ի դասուն և ի
« նեղ օրերս որ կանք ի ժամանակս
« Խանութեան Բագարին որ է որդի
« Վախթանք Խանին որ գնացեալ էր ի
« Սպահան այսօր կուգա վաղն կուգա
« այսպիսի բանի միջում էին . ես Ապովս
« եկա ի վանքն Այդատա գեղջէ Զիթա-
« հանքու որ իմ որդի Սարգսին ի ՌՃԿ
« և Ը ԹՎին տեսա , զայս Աւետարանս

« նորագած էր առ ի ինձ յիշատակ ի
« հալալ արդեաց և արդար վաստակից
« իմոյ , գնեցի զնոր կազմուած Սր Աւե-
« տարանս Աղբատա , այլ եւ տուի Աղ-
« բատա Սր Նշանին վասն յիշատակի
« հոգոյ իմոյ , և ծնողաց իմոց հօր իմոյ
« Սարգսին . և մօր իմոյ Սենուխսին ,
« և կողակցին իմոյ Շահրխսանին որ
« այսմ ամի առ Քս փոխեցաւ , և որ-
« դոցս դեռարողբողջ Ալանվէրսուն ,
« Սարգսին , և Թահմազին , և այլ մեր-
« ձաւորաց իմոց կենդանեաց և ննջե-
« ցելոց , աղաչեմք զձեզ Հայաք և վրպք
« և կրաւնաւորք , որ Սր Աւետարանս
« կարդալով կամ աւրեանակելով և կամ
« հարեւանցի տեսանելով յիշեալիք ի
« մաքրափայլ յաղթս ձեր , զվերողբու-
« եալ պարոյն Ապովս և զհանգուցեալ
« կողակցին իւր Շահրխսանն և զորդի-
« քըն զԱլանվէրսին եւ զՍարգսին եւ
« զԹահմազի պէկն և հարսն Թահմազն , և
« զետի կողակցին զԱղիզն , զծնօղքն և
« զմերձաւորքն ամենայն , նա որ առա-
« տըն է ի տուրս բարեաց , ձեզ և մեզ
« ողորմեցի ի միւսանգամ գալստեան
« իւրոյ ամէն , վասն յուսոյ արքայու-
« թեան և անմահութեան գրեցի զՍր
« Աւետարանս զոր կու հրմայեն Սր Ա-
« ռաքեալք , թէ երանի որ ունիցի յի-
« շատակ ի Սիոն , ընտանիք նորա ի վե-
« րին յեղմ , վասն այն յուսով գնեցի
« զՍր Աւետարանս և տուի հոգեւոր
« զաւակ , ի դուռն Սր Նշանիս և դուք
« տեսողք ասէք զԱծ ողորմին , Պարոն
« Ապովին և հանգուցեալ որդիքն որ
« առ Քս գնացեալ են զԱլանն և զԱղիզ
« պէկն և զՎարդանանն , և զդուստրն
« զՊուհարն , և զամենայն մերձաւորքն
« իւր ամէն : »

ԹՂ. 377ա . Վարի լուսանցքը գրը-
ուած կայ . « ԹՎին ձի » :

ԹՂ. 7ա . Խորանի վերջին կողմը մի
տող , Սեպագրի և կամ բեւեռագրի պէս
պարբերութիւն մը կայ , որուն նմանա-
հանութիւնքն յառաջիկային կը թո-
ղուք : Վերջ :

— Սոյն Մոզնիի Ս. Աւետարանէն ի
զատ , ի լրոյ լած եմ թէ յԱղէքսանդ-
րապօլ Ս. Փրկիչ եկեղեցւոյ մէջ կը գտու-
նուին երկու Զեռագիր հին Աւետա-
րանք , որոց՝

Առաջինը՝ Մագաղաթեայ երկաթա-
գիր , ԹՎին ՆԼԸ են գրուած , (սա այժմ
կը գտնուի եղեր ի նոյն քաղաք նորա-
չէն Ս. Ածծնյ . եկեղեցւոյ մէջ) :

Երկրորդը՝ գրիչն է եղիւ եպս Թար-
մատար Մանողի . Թուականն է ՈՒ (=
1168) . գրեալ է ի գաւառին ՄԱՐ ի
Վանս Գետամիջոյ . Նկարիչ և կազմողն է
Խաթ :

ՏՐԴԱՏ ՎՐԴ. ՊԱԼԵՍՏ

1892 յունիս 27

Կ. Պօլիս

ԺԱՄԱՆԱԿ ՇՆԻԿ ԱՍՏԵՂ

Օրերն հետզհետե տաքնալու վրայ են, և քիչ վերջ Շնիկ աստեղ առուրց մէջ գտնուելով, բնականաբար ոչ միայն պիտի գանգատիմք այդ չար աստղէն, այլ և ահ ու դողի մատնուիմք, վասն զի ըստ ոմանց այս ժամանակամիջոցին մէջ տենդն ու ջերմ կը սաստկանան, և ըստ այլոց՝ հիւանդութիւնք իբր համաճարակ ամէն կողմ կը տարածին. ուստի շահեկանութենէ զուրկ չլինիր գիտնալ թէ ինչ է Շնիկ աստղն, անոր ժամանակն, թէ պէ՞տք է հաւատ ընծայել այն նախապաշարմանց որք Շնիկ աստեղ կը վերադարձնէ, և վերջապէս ուստի՞ ծագում առած է այս հաւատքն որ ժողովրդոց մտաց մէջ արմատացած է:

Յիսուն դար յառաջ, կամ աւելի ճշգիւ Քրիստոսէ 2782 տարի յառաջ, նախ եգիպտական այն գեղեցիկ դարուն մէջ կը կարծուի որ Շնիկ աստղն ինչպիսի առնուելով ձախող աղբեցութեանց պատճառ նկատուած լինի: Հին եգիպտոս իրեն յատուկ ու է գիտութիւն մը չունեցաւ, իւր աստեղագիտական ծանօթութիւնները ի Հնդկաստան քաղցեց և վատթարացուց գիտական այն ճամարութիւնները որք իրեն փոխանցուած էին Հնդկի քուրմերու միջոցաւ: Պատմութիւնը կ'ապացուցանէ թէ եգիպտոսի քուրմերը շատ մեծ դեր մը խաղալ կուտային այն աստղին որ կ'անուանէր Սօթ, Սօթիս, Հերմէս-Անիւպիս և Սիրիոս կամ Սիրիոս, որոյ շուրջ կը դառնային իրենց բոլոր երկնային ծանօթութիւնք. այս աստղին անուամբ է որ եգիպտոս կոչուած է երկիր Սօթեան կամ Սիրիատեան: Սիրիոս կամ Սիրիս անուան մէջ կը գտնուի նաև Ռսիրիս անունն որ յեգիպտոս արեգակն ու Նեղոսը կը ներկայացնէր:

Աստեղագիտութիւնը մեզ կ'ուսուցանէ թէ Սիրիոս (ալ Իմաքիաթ, — Ուալաօր արաբերէն) հաստատուն աստղերու ամենալուսաւորն է և Մեծ Շուն համաստեղութեան ալիքան լինելով, կոչուած է նաև Շնիկ աստղ. մեր երկրաց մէջ Սիրիոս ձմրան գիշերները կը տեսնուի ու շատ դիւրութեամբ կարելի է ճանչնալ. Հայկ համաստեղութեան (Orion) հարաւակողմը սքանչելի ճերմակ գոյնով մը կը պլպլայ:

Սիրիոսի արեգակնային ելքն ու մուտքը (1) միջոց մ'եղաւ հաստատման

(1) Արեգակնային ելք ու մուտք (heliac) ըսելով կը հասկնան այն փայլուն աստեղը, որք արեգակէն ժամ մը յառաջ ծագելով ու արեգակէն ժամ մը վերջ մարը մտնելով, արևու ճառագայթից մէջ անտեսանելի չեն լինիր:

այն շրջանին որ կ'անուանի շրջան Սօթիական կամ շրջան Շնիկ աստեղ, որուն տեղութիւնը 1461 տարի էր, և որ գտնուեցաւ սապէս. եգիպտացւոց քաղաքային տարին ճիշդ 365 օրերէ կը բաղկանար, փոխանակ 365 1/4: այս քառորդ օրն տարուէ տարի բարդուելով, արեգակնային տարին անորոշ կը լինէր, հետևաբար 1460 տարիներէ վերջ, 1460 քառորդ օրերն որ 365 ամբողջ օրեր, այսինքն տարի մը կ'ընեն, աւելնալով վերջացած 1460 տարիներու վրայ, կը լինէր 1461 տարի, և ապա վերստին կ'սկսէր Շնիկ աստեղ շրջանը, վասն զի 1460 արեգակնային տարիներ ճշգրտաւ կը հաւասարէին եգիպտական 1461 քաղաքային տարիներու:

Եգիպտոսի քուրմերը կը կարծէին թէ սքանչելի գիւտ մ'ըրին՝ հնարելով իրենց Սօթիական շրջանը, և այն ատեն աստեղագիտութեան մէջ շատ տեղ գէտ եղող Յոյներու կը պարծենային թէ իրենք են տարին գտնելով զայն 12 ամիսներու բաժնով. Յոյնք այս ամենուն հաւատալով կը վարմանային:

Տարւոյն սկզբնական օրը յետամնաց լինելով իւրաքանչիւր տարի քառորդ օր մը, կրօնական և հասարակաց սօները, դաշտի աշխատութիւնք և մանաւանդ Նեղոսի յորդիւր, եգիպտոսի այս ամենամեծ բարիքը, բոլոր ժողովրդեան համար անորոշ ժամանակի մէջ կը պատահէին. սակայն քուրմերը, Շնիկ աստեղ շրջանին միջոցաւ՝ զոր միայն իրենք գիտէին, այս ամենուն ժամանակները որոշելով կը ծանուցանէին: Գիտական ամէն ինչ քուրմերու իշխանութեան ներքև լինելով, Սօթիական շրջանի գաղտնիքը անոնց համար մեծամեծ շահերու աղբիւր կը լինէր, ուստի քուրմերը գահակալութեան մը ըսկիզբը կ'երգուէնցնէին իւրաքանչիւր թագաւոր, որպէս զի նահանջ տարիներու տոմարը չհաստատէր:

Ինչպէս Հերոդոտոս ևս կ'ըսէ, Քանօփոսի, Փոմալցօթի (1) և Սիրիոսի արեգակնային ելքն ու մուտք կ'իմացնէին թէ Նեղոս պիտի յորդի: Այն ժամանակի

կամ ուրիշ կերպ ըսելով, աստղ մը՝ որ անտեսանելի կը լինի այն վայրկեանին ուր արևը կը ծագի, և կամ կը տեսնուի այն վայրկեանին ուր արևը մարը կը մտնէ:

(1) Քանօփոս՝ Արքօ նաև համաստեղութեան և Փոմալցօթ՝ հարաւային Ձուկ համաստեղութեան ամենափայլուն աստղերն են: Փոմալցօթի իրիկուեակքը կը ցուցնէր արևու մուտքն յարեակայքն Ասիւծի, ինչպէս Սիրիոս իւր արեգակնային ելքով. այս երկու աստղերն Նեղոսի յորդելուն պատճառ նկատուած էին: Փոմալցօթ այլ և այլ անուամբք պատուուած էր յեգիպտոս:

համաստեղութեանց համեմատ երբ արեգակը Այծեղջրոյ մէջ գտնուէր, նախ ամառնային արեակայքը կը պատահէր, և իրիկուները Սիրիոսի երևումը կը յայտնէր թէ Նեղոսի յորդելու ժամանակը կը մօտենայ. սակայն գիշերահաւասարաց կէտին իւրաքանչիւր տարի 50'' 2 յետախաղաց շարժմամբ Քանօփոս, Փոմալցօթ և Սիրիոս իրենց արեգակնային ելքի ժամանակը փոխած լինելով, քուրմերը այլ ևս չէին կրնար այս երևութիւն ճիշդ ժամանակը որոշել. այսու հանդերձ, Սիրիոս չդադրեցաւ նոր դեր մը խաղալ, վասն զի իւր արեգակնային ելքը եգիպտոսի մէջ իյունիս 20 կը տեսնուէր, Նեղոսի յորդելէն 15 օր յառաջ:

Մեզ համար Սիրիոսի այս արեգակնային ելքը օգոստոս 20էն կ'սկսի տեսնուի լինիլ, թէև յառաջագոյն աւելի կանուխ տեսնուելով՝ միակ պատճառն ու պատասխանատուն համարուած էր սաստիկ տաքութիւններէ անբաժան եղող հիւանդութեանց, չարեաց և դժբաղդութեանց և ահա աստի ծագումն առած է ինչ որ կ'անուանեմք ժամանակ կամ աւուրֆ Շնիկ աստեղ, որ յուլիս 22էն մինչև օգոստ. 23 կը տեսնուի:

Շնիկ աստեղ շրջանը, ըստ նախապաշարմանց, վերստին յառաջ կը բերէ միևնոյն դէպքերն և նոյն երևոյթներն, վասն զի կը հաւատային թէ ամէն ինչ երկնային (աստղերու) տեսիլներէն կախումն ունի. Ոսկեդարու սկիզբն ևս ասկից է զոր բանաստեղծք կը ներբողեն: Կըսուի թէ Սօթիական շրջանը երջանիկ իշխանութեամբ մը կ'սկսի. 138ին Անտոնինոս և 1598ին Հենրիկոս Դ. կ'իշխէին, և որոց թագաւորութիւնը ժողովրդոց համար երջանիկ եղաւ. արդ, այս երկու թուականք Սօթիական շրջանին սկզբանց կը համապատասխանեն:

Շնիկ աստղի օրերն Հռովմայեցւոց և Յունաց քով տարբեր կերպիւ նկատուելով, հարաւային փնտաւար հովեր փչելու ժամանակ կ'ընդունէին. այս հովերն որ ի Միջերկրական 6 շաբաթ կը փչեն, կը կոչուին էթէսիան (étésien-եղանակական): Այս աւազախառն տաք հովերն Սահարայի անջուր անապատներուն վրայ գոյանալով, անշուշտ կատարելապէս զգալի պիտի լինին Միջերկրականի և անոր եղերաց վրայ, քանի որ Միջերկրականի բարեխառնութեան աստիճանին փոփոխումը շատ տկար կը լինի. Սահարայի այս կիզիչ հովը կ'անուանի Սամուկ, Սիմուկ և Սէմուկ, արաբերէն սամա բառէն որ կը նշանակէ տաք և թուխաւոր. կը կոչուի սամիլ (samiel, խորշակ, սամ եէլ), արաբերէն սամ բառէն որ թոյն կը նշանակէ:

ինչպէս Հիպոկրատ և Պլինիոս, նոյնպէս ամէն բժիշկ կը յանձնարարէին այդ միջոցին «արիւն առնուլ չտալ, բազանիս չմտնել, քիչ քանակ և չափով խլամել»։ Յոյնք և Հռովմայեցիք ամէն տարի այս չար աստղին (Սիրիոս) չիկադոյն շուն մը զոհելու սովորութիւնն ունէին, աղաչելով որ իրենցմէ հեռու պահէր իւր պատուհասները։

Յարմար առիթն է ըսելու թէ չկայ նախապաշարում մը որ սկզբնական ճշմարտութեան մը յառաջ եկած չլինի, չկայ երբեք դիցաբանական անհեթեթ առասպել մը որ ստոյգ իրողութեան մը չափազանցեալ վէպը չլինի։ այսպէս նաև Շնիկ աստեղ վերաբերեալ ազդեցութիւնք իրր հիմն ունին իսկական պատճառներ։ Շնիկ աստղի օրերն Եգիպտոսի մէջ ամենատաք եղանակին կը պատահի, յայնժամ որ օդն աւազով լի է և ու է համաճարակ հիւանդութիւն մը երբեք չպակսիր։ Բայ ասկից, երբ Նեղոսն սկսի իջնալ, ջուրերու բերած կաւն ու աղտեղութիւնք ժանտահոտութիւն կը բուրեն որ մահացու հիւանդութեանց պատճառ կը լինի։ Հետեւաբար, Եգիպտական հին տգէտ Ժողովուրդը չէ այնքան մեղադրելի, երբ ի շնորհս իրենց քուրմերուն, կը հաւատային թէ ամէն ինչ երկնային լուսարարաց ազդեցութեամբ կը պատահի։ Եգիպտական դիցաբանութիւնը փիւնիկ հաւ մ'եւս կը յիշէ, որ իւր թէ 1461 տարիներու թափառական կեանքէ մը վերջ կը վերադառնար Հնդկաստանէն ու Արաբիայէն, ուր կը բնակէր, և Հեփուպոլիսի (քաղաք Սուրին Եգիպտոսի) Արեգական մահէնին սրբարանին մէջ կը մտնէր, հոն արեւու կիզիչ ճառագայթներէն այրուելով մեռնելու համար, սակայն փիւնիկը չէր յապաղեր վերածննդի իւր անհիշեցուն, և 1461 տարիներու նոր կեանք մը կ'սկսէր։ փիւնիկ հաւուն այս վերածնունդը Եգիպտացիք մեծաշուք հանդիսուք կը տօնէին։ աւելորդ չէ՞ ըսել թէ փիւնիկ հաւը Սօթիական շրջանն է։

Շնիկ աստղի օրերն որ յԱնգլիա dog days և ի Գերմանիա hundstage կ'անուանուին, մեր լեզուին մէջ գործածուած նշանակութեամբ են, և ճշգրտապէս տարւոյն ամենատաք օրերուն կը պատահին։ Վերջին երկու դարերու զընեութեանց ցանկ մը կը ցուցնէ թէ ամենատաք օրն ապրիլ 11ի և օգոստոս 27ի մէջ կ'ընկնայ, սակայն միջինը օգոստոս 1ին կը համապատասխանէ։

Ներկայ դարու մէջ մարդ ամօթ կ'զգայ նախապաշարումներէն ճառելու, ինչպէս է Շնիկ աստղն ու ժամանակը։ արդարեւ, ի հնումն Սիրիոսի արեգակնային ելքի ժամանակին հետ հիւան։

դուրսնք զուգադիպութիւն կ'ունենային, բայց այժմ՝ գիշերահաւասարաց կէտին յետախաղաց շարժմամբ, այն ժամանակը որ Շնիկ աստեղ աւուրք կամ ժամանակ կը կոչուի (Սիրիոսի Արեգակնային ելքը), Շնիկ աստեղ աւուրց անցնելէն վերջ տեղի կ'ունենայ, թէև ամառնային տաքութիւնք համաճարակներու ծնունդ կուտան, սակայն ծիծաղաշարժ նախապաշարում մ'է ընդունիլ թէ այս հիւանդութիւնք աստղի մը շաղկին ազդեցութեամբ տեղի կ'ունենան, փոյթ չէ թէ այս աստղն երկնից ամենալուսաւորը լինի, ինչպէս նոյն ինքն Սիրիոս։

Այնքապ

ԹԱԹՈՒԼ ՔԻՐԻԷԼԵԱՆ

ՀԳԱՅՈՒՆ ՊԶՏԻԿՆԵՐ

Հոգեկան տեսակետով, տղայք շատ քիչ անգամ մեր ուշադրութեան առարկայ կը լինին։ տղայոց քով մեր շարժմանց, մեր խօսակցութեանց դուն ուրեք կարեւորութիւն կ'ընծայեմք։ մեր բազմաթիւ անպատշաճ վարմունքներ կ'որդարանան միակ մտածմամբ մը — տղայ են։ Չեմք ուզեր ըմբռնել թէ այն պղտիկներն ևս օժտեալ են իմացական ամէն կարողութիւններով, կարողութիւններ՝ որք, կարգ մը բնախօսական պատճառներով, շատ անգամ աւելի սուր, աւելի փափուկ, աւելի դիւրադրգաց են քան չափահաս մարդունը։ մեր այս զանցառութիւն կ'ենթադրէ հոգեբանական ամենախորին տգիտութիւն մը, որոյ շնորհիւ յաճախ ամբողջ դեռափթիթ կեանքերու բարոյական փրճացման պատճառ կը հանդիսանամք։ մինչդեռ մտքի գործողութեանց մասին աւելի խորին հմտութիւն մը, այն փոքրիկ արարածներու նկատմամբ քիչ մ'աւելի ուշադրութիւն՝ բոլորովին հակառակ արդիւնք պիտի պարգեւէր։

Մանկավարժութեան գաղտնիքներէն մին՝ պղտիկները մեզի բարեկամ ընելուն մէջ կը կայանայ, բայց ոչ թէ կեղծ բարեկամներ, խաղալիքներով կամ նմանօրինակ նիւթական վարձատրութիւններով շողմուսած, այլ գալլափաթի, զգացումի բարեկամներ։ Շատ անգամ տղայք մեզ թշնամի կը հանդիսանան, որովհետեւ իրենց կարեւորութիւն չեմք տար։ Դուք տղայ ես բացատրութիւնը զոր յաճախ անհոգութեամբ կը գործածեմք, սրածայր պողպատեայ քամի մը պէս կ'երթայ կը մըխուի տղուն զգայուն սիրտը և կ'արկնէ դայն։ նոյն հետայն, ապստամբութիւն մը կը ծագի անոր պղտիկ ուղեղին մէջ և պատրաստ է յետ այնու քեզ

հետ կուրիլ իւր չորաւոր մէկ գէնքով — յամառութեամբ։ խրատներ կուտան, ճշմարտութիւններ կը պարզեն, մեղմ կը խօսին, խիստ կը խօսին, ամէն ինչ անօգուտ է։ Հիւանդուիլ, հիւանդուիլ, հիւանդուիլ։

Տղոց նկատմամբ մեր անուշադրութեան մէկ հետեւանքն ալ, անոնց միտքը կանխահաս գաղափարներով լեցընելն է։ տղոց քով խօսակցութիւնը բաժնաւոր են՝ նիւթերու բնորոշութեան մասին բոլորովին անհոգ կը գտնուիմք և երբեմն իսկ չեմք թեթեւիլ գայթակղական խնդիրներ աւշջալիել, իւր թէ քօղածածուկ լեզու մը գործածելով որ պղտիկին հնարամտութեան առջև պարզապէս ծիծաղելի կը դառնայ։ չեմք մտածեր թէ տղայութեան տարիքին մէջ միտքը ամենէն աւելի հետաքրքիր է ամէն ինչ իմանալու, ամէն գաղտնեաց խորը թափանցելու։ սակայն այնպէս, ըստ որում մտքի զարգացումն աստիճանաբար տեղի կ'ունենայ, որոշ համեմատութիւն մը պահելով մարմնոյ զարգացման հետ, չէ կարող իւր զարգացման հետ, չէ կարող իւր զարգացման առաջին աստիճանին մէջ ըմբռնել անվտանգ կարգ մը այնպիսի իրողութիւններ՝ որք աւելի մշակեալ և խելահաս միտք մը կը պահանջեն, և ես չեմ ուզեր ծանրանալ թէ ժամանակէն առաջ տրուած այս կարգի հմտութիւններ իրենց անկատարութեամբն ու անպատշաճութեամբ քանի՞ վնասակար կը հանդիսանան մատուց մտքերու։

Բայց եթէ կայ տղոց մտքին վրայ ամենէն աւելի դառն տպաւորութիւն ձգող բան մը, այն ալ ու է կերպիւ իրենց նիւթական կացութիւնն իրենց զգալի ընել տալն է, բաղդին դառն հարուածները կամ կատակները ծամանակէն յառաջ անոնց ծանօթացնելն է։ այս կերպով, անոնք շատ կանուխէն գիտակցութիւն կ'ունենան իրական կեանքի դժուարութեանց, անիրաւութեանց, ստորութեանց և զըրկանաց։ այս կերպով անոնք շատ կանուխէն կ'սկսին տեսլութեամբ լցուիլ իրենց աւելի դիւրակեցիկ ընկերաց դէմ և աւելի խորապէս զգալ իրենց վիճակին ծանրութիւնը։ և տակաւին անկարող խնդիրը բարձրէն նկատելու իրենց փոքրիկ ուղեղը յոռետեսի հառաչներ կը ծայթօքէ։ հառաչներ, որք իրենց արձագանգը կը գտնեն աւելի տարուք ուղեղներու մէջ... Մէկ քանի դէպքեր իմ անձնական փորձառութեան քաղուած, ամէն փաստերէ աւելի պերճախօս են։

Դեկտեմբերի ցրտաշունչ օրերէն մին էր։ առաւօտեան ձիւնին յաջորդած էր անձրևախառն քամի մը որ կէս ժամու

մէջ գետինը տիրումը ողորկելով, փողոցները գրեթէ անանցանելի վիճակի մը մատնած էր. խցիկիս մէջ ամփոփուած դուրսի տեսարանը կը դիտէի. հեռուէն 7—8 տարեկան թուրք աղջիկ մը կը նշմարեմ որ վազելով կուգայ մեր տան դիմացի հողակոյտին վրայ կը կենայ. բազուկներն հանգրիճած և իւր հինուկ էնթարիին քղանցքը մէջքը խոթած է, գործի վրայ եղողի մը պէս. բոպիկ ոտքերը էրիկ մարդու խոշոր կոշիկներու մէջ կը կորսուին. այս թխորակ առոյգ աղջիկը իւր հայեացքը չորս կողմ շրջելէ յետոյ վերջապէս կը նշմարէ ջրկիրին սայլակը, որուն վրայ ջրի գիրուկ տակառները երկու կարգի վրայ կը հանգչէին. ոտքի ու ձեռաց շարժումներով և բոլոր ուժովը պոռալով, վերջապէս կը յաջողի ջրկիրը կանչել և կը խնդրէ որ անմիջապէս իրենց տունը քանի մը տակառ ջուր տանի, ուր լըռացք կ'ընեն և նոյն պահուն իրենց ջուրն սպառած է. ջրկիրը, որ կ'երեւի թէ առաջին անգամ կը տեսնէր զնէ, վերէն վար կը քննէ անոր հագուստները, բոպիկ ոտքերուն կը նայի անգամ մը և յետոյ, դէմքի ծամածռութեամբ մը, կը հարցնէ. — Եվիմիզ Գէրէճէ սիր: Փոքրիկը, կարծես վայրկենապէս քմերունած ջրկիրին մոքէն բոլոր անցած դարձածը, առանց հարցմանն ուղղակի սրտասխանելով՝ հեզնական դառն ժպիտով մը կը բացագանչէ. «Ի՞նչ պաս պահաղը պիւր է՛վ...» Անդգայ ջրկիրը խորագանցէ ձիւրն և սայլակը անտարբեր յառաջ խողաց, լարծուն ցելսերուն մէջ թաւաղվոր. Բայց ես կարծես տակաւին կը լսեմ հէք փոքրիկ թրքուհւոյն խուլ հառաչանքը. «Պաս պայաղը պիւր է՛վ...»

Տարիներ յետոյ, Մ... գիւղի վարժարանը իւր երկսեռ ուսանողաց դաշտային խնձոյք մը կողմակերպած էր, որուն մասնակցելու համար ամէն ուսանող պարտէր հինգ զրուշ վճարել. խնձոյքին որդեալ օրը հասաւ, Մայիսի գեղածիծաղ օրերէն մին, և զուարթ ուսանողներն իրենց ուսուցչաց առաջնորդութեամբ գնացին ուրախ ժամեր անցունել վէլի էֆէնտիի մարգերուն վրայ կերան, խմեցին, երգեցին, պարեցին. թուշունի պէս ազատ և թիրեռնիկի պէս թեթեւ ու միամիտ էին ոյն օրը. իրենց զգացած երջանկութեան չափ ու սահման չկար. և ո՞վ կ'ուրանայ այդ օրինակ ընկերական խնձոյքներու քաղցրութիւնը և անբուցատրեւի հաճոյքը. ամէն ուսանող իւր յուշատետրին մէջ կը գտնէ այսպիսի գուարթ օրերու յիշատակներ որք ապահովապէս իւր կենաց քաղցրագոյն էջերը կը կազմեն. Բայց Մ... գիւղի

ուսանողաց մեծագոյն մասին համար բարեբաստիկ այդ օրը, փոքրիկ աշակերտուհի մը կար մուսալութեան մատնուած և դառնապէս տխուր. մերժուած էր հանդէսէն և եկած էր իւր տխուր ժամերը մասամբ ամոքել ազգականի մը տունը, որոյ դրան առջև բռնագրօսիկ կը խաղար. — «Դուն ինչո՞ւ այսօր վէլի էֆէնտի չես գնացած» կը հարցունէ նմա. — Որովհետեւ, կը պատասխանէ հէք փոքրիկը, հինգ զրուշ չկրցի վճարել... Եւ սե խոշոր աչքերէն արտասուաց կաթիլներ կը գլորին այտերն ի վար: Հինգ զրուշին համար մերժուած էր հանդէսէն. ծնողաց աղքատութիւնը արգելք եղած էր պահանջուած գումարը վճարելու. այդքան դրամով տան երկու աւուր հացը գոնէ կ'ապահովուէր. և սակայն մեծ էր փոքրիկին վիշտը այս գրկանքին պատճառաւ. իւր փափուկ սրտիկին խորը վէրք մը բացուած էր որ գուցէ տարիներով չ'սպիանար...

Ի՞նչ կը լինէր, եթէ խնձոյքին կազմակերպիչներէն մին իւր քսակէն վճարէր այդ աննշան գումարն և այս կերպով հոգեկան մեծ սփոփանք պարգեւէր զգայուն սրտի մը. հինգ զրուշով բարեգործութիւն մ'ըրած պիտի լինէր: Բայց միշտ սա մտածումը—Տղայ եմ:

ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսայի Մոնպրիզոն քաղաքին մէջ Ռաֆաշօլ, զոր Բարիզու գաղտնորները չկրցան մահուան դատապարտել, ուրիշ ոճրոյ մը համար կախաղան հանուեցաւ:

— Իւրիզու մէջ 1900 մայիս 5ին Համաշխարհային Արուեստահանդիսի մը բացման հրամանագիրն ստորագրուած է:

— Պոնէրվիլի մէջ (Ֆրանսա) հողը շարժելով, Սէն-Փէրվէի բաղնիքը փլաւ և 100 մարդ Արվ գետը թափեցան:

— Անգլիոյ Երեսի. ընտրութեանց մէջ Լոնտոնի մէկ շրջանակէն ընտրուած է Կլապթոնեան հնդիկ Պ. Նասրոճի:

— Կլասքոն անցեալ շաբթու ընտրական բանախօսութեան մը համար Ձէսթէր գացած միջոցին, ըստ երկրին հին սովորութեան, կին մը ի նշան բարի գալուստի՝ հաց մը նետեր է իրեն, որով աչքէն թեթեւակի վրաւորուեր է, առանց յետաձգելու իւր բանախօսութիւնը: Ըստ նոյն սովորութեան, ողջերթի համար ալ գացողին ետէն կօշիկ կը նետեն եղեր:

— Բարիզու իրաւարանական համալսարանէն վարդապետի վկայական

ստացած է աղջիկ մը՝ Օր. Ժանն Ծօվէն: — Ֆրանսայի Հօգ գրահաւորը Մարտիկոյ մօտ մարզանք կատարած միջոցին, Մարէալ. Քանոպէլ շոգենաւուն բաղխելով, զայն երկու կտոր ըրեր և ընկղմեր է: Ուղեւորաց մեծագոյն մասն ազատած են:

— Պասէնի մեծ դքսութեան բողոքական եկեղեցւոյ բարձրագոյն խորհուրդը գիւղիկութիւնը Քրիստոնէական վարդապետութեան հակառակ չը գտնելով, արտօներ է Աւետարանի սղաշտօնեայները այրուելիք դիակներուն վրայ դամբանական ըսել:

— Լոնսոնի մէջ հակաեթական դեղ մը վաճառող ընկերութիւն մը լրագրաց մէջ 100 ոսկի խոստացած էր իւր դեղէն առնելէ յետոյ էնֆիլէնցա եղող անձին: Տիկին մ'որ այդ դեղէն առնելէ յետոյ էնֆիլէնցա եղած էր, դատ բանալով շահեր է 100 ոսկին, թէպէտ ընկերութիւնը նախապէս չաւառուէր է:

— Լոնսոնի մէջ Փրանսացի դազանապահ Քոնսալֆօս իւր խոսեա դրած արջը շատ ծեծելուն համար մէկ ամիս բանտարկութեան դատապարտուեր է:

— Ֆրանսայի Երեսի. Ժողովոյն մէջ Տահոմէի վարկին վիճարանութեան ատեն նոյն տեղի ծովային և ցամաքային զօրաց հրամանատարութեանց միացումը քուէարկուեցաւ, որուն հակառակ լինելով, ծովային նախարար Պ. Գապէնեք, ինչպէս նաև ամբողջ նախարարութիւնը հրաժարեցաւ, այլ Պ. Քառնոյի ստիպմանց վրայ նախարարութիւնը իւր հրաժարականը ետ առաւ, բաց ի Պ. Գապէնեքէ, որուն յաջորդած է Պ. Պիւնտօ:

— Սան-Ֆրանչիսկոյէն 12 միլիոն հեռու գտնուած վառօդարանը պայթելով, շատ մը շէնքեր կործաներ և 180 գործաւորք մեռեր են:

— Նիու-Ֆաուսէլէն կղզւոյն Սէնթ-Ճօն քաղաքին մեծ մասը հրոյ ճարակ լինելով, 3—4 միլիոն ոսկի վնաս դոյացեր է:

— Ռուսիոյ կայսերական գերդաստանը Բեթերսպուրի դարձած է:

— Թօնֆիմի մէջ Ֆրանսացւոց եւ Չինացւոց կռիւը կը շարունակուի:

— Անգլիոյ կառավարութեան ծանուցուեր է ետ կանչել Ալքերիոյ մէջ գտնուած անգլ. միախնայները՝ կրօնական շփոթութեանց վերջ տալու համար:

— Ռումանիոյ թագաւորն ու գահաժառանգը շաբթուս Պրիւսէլէն Քօլօնը գացին:

— Ֆրանսայի մէջ քարիւղին վրայ դրուած արդի մաքսը մինչև 31 դեկտեմբեր երկարաձգուած է:

— Քրոյսքնի մէջ (Անգլիա) պահպանողական ընտրելոյն յաջողութեան վրայ, Պ. Կլատտթոնի ջերմ կուսակից երկաթեղինաց վաճառական մը սրտին ցաւէն ինքնասպան եղեր է :

— Ռուսիա Լիէժի գինագործարանին 400,000 Պէրտանի ուսումնական հրացաններ բազմահարուածեանի փոխարկել յանձնարարած է :

— Ռուս Մուրզապ գետն ի վեր ելնելով, աֆղանեան հողը մտնել համարձակեր են և դէպ ի Բանիս Քասաճ շարժում կ'ընեն եղեր :

— Նորվեկիոյ Քրիստիանստան քաղաքին մեծագոյն մասն, իբր քանի մը հարիւր տուն, հրոյ ճարակ եղեր են :

— Ժընէվի լճին մէջ շոգենաւու մը կաթսայն պայթելով, 27 հոգի մեռեր և 24 ալ ծանրապէս վիրաւորուել են, մեծաւ մասամբ Ֆրանսացի և Անգլիացի :

— Մեքսիկայի հանրապետութեան նախագահ վերընտրուած է Զօր. Բօրֆիրիօ Տիագ :

— Մարոքի վեհապետը անգլ. դեսպանին գրեթէ բոլոր առաջարկներն ընդունել է :

— Եսնա սաստկապէս բորբոքելով 5 քերանէ կրակ և լաւա դուրս կուտայ :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մուսուլի կողմերն ասպատակող Հէզարը-գիթթի Ալի Ապտուլլահ Զէյպէք որ վերջերս հալածուելով Պարսկաստան փախած էր, դարձեալ երևան ելած լինելով, այս անգամ ձերբակալուած է :

— Տրապիզոնի մէջ ասպատակող ճան Մէհմէտ աւազակն ալ ձերբակալուած է :

— Թիքսարական միջազգային գործողութեանց 7 յօդուածէ բաղկացեալ հրահանգ մը սպառնալով, ամէն նամակատան զրկուած է :

— Լիքսանու կուսակալութեան թարգման և վասա փաշայի փեսայ Բիւբէլեան էֆ. հրաժարեր է :

— Թէնպէիի Րէժիին գրամագլուխը գործին ընդարձակութեան համար 200000 ոսկւոյ չափ ևս պիտի աւելնայ :

— Հիւսնիսնուրի (Պարսերդ) թաղապետական բժիշկ Տէթ. Հրանտ էֆ. Մալաթիայէն դարձած միջոցին կառքին անիւները հողին մէջ մխուելով, երբ Հրանտ էֆ. կառքէն վար կ'իջնէ, կառքը գլորելով ներքեւը կը մնայ եւ քիչ յետոյ կը մեռնի :

— Պէյֆօքի առջեւ 7 մեծ ձուկեր (ստալրիտ աղմանը) ուրիշ աւելի խոշոր ձուկէ մը հալածուելով, իրենց մէջ առիւնազանգ կռիւ մը տեղի ունեցեր է :

ձկնորսը հասնելով, ամէնքն ալ ձերբակալեր ու ցամաք հաներ են :

— Մուսուլի Էրպիլ գիւղաքաղաքին մէջ 70 տարեկան Ճէպրայիլ անուն քիւրտ էրիկ մարդու մը ստեանց մէջ արբունքի հասնելէն ի վեր կաթ կը գոյանայ և իւր վաւակներն ալ այդ կաթով գիւցուցած է եղեր :

— Էյրիկ Էօգի (Բէօթանիա) մէջ յունիս 12ին կարկուտ տեղալով, խաղողներուն ու գարններուն վնասեր է :

— Պօրսուրի մէջ (Բօնեա) յունիս 20ին երկրաշարժի սաստիկ ցնցում մը զգացուելով, քանի մը շէնքեր փլչեր են առանց մարդու վնաս պատճառելու :

— Պրուսայի Պրուսա լրագիրը մէկ ամիս դադարման դատապարտուած է, յունիս 27էն :

— Նիկովիդիոյ աւազակներէն Սիւլէյման ևս ձերբակալուած է իւր դոնաթաքայցներուն հետ :

— Սիւէֆիի մօտ ձեպլնթաց կառավարման կեցնող Աթանասի աւազակախումբէն Բըրք Բիլիսէի Սիլուպ գիւղացի հաճի Եօրկիօղլու թէոոոս աւազակն անցեալ օր Բերայի մէջ ձերբակալուեցաւ :

Տօպիցայի ոստիկանութիւնն ալ նոյն խումբէն 7 աւազակներ ձերբակալած է որոց հինգն արդէն խոստովանած են թէ կառավարման կեցուցած են : Ասոնք յայտներ են նաև թէ Գարտան Աթանաս իրենց պետը՝ Տօպիցայի չըջակայ անտառաց մէջ կը գտնուի :

— Չարախայի Փափազը թգարակէն Ահմէտ և Սալիհ պէյերը լեռը տանող Գարտան Աթանասն ալ ձերբակալուած է :

— Քօնեայի սուրհանդակը Պրուսա գացած պահուն Տինարի մօտ ինը հեծեալ աւազակներէ կողոպտուել է որք պայուսակին մէջ գտնուած 76000 զր. հնչուն դրամն առեր և երկու ոստիկաններն ալ վիրաւորեր են, սակայն իրենք ալ ձերբակալուած են :

— Սելանիկի մէջ հիւպատոսարանի մը կառուցման համար Ֆրանսայի Ծերակոյտը 210000 ֆր. քուէարկած է : Հիւպատոսարանին հին շէնքը միսիօնարաց պիտի յատկացուի :

— Զմիւռնիոյ առջև խաւական Պօսթօն շոգենաւուն գլխու կողմէն հըրդեհ ծագելով, մեծ մասն այրեր է :

— Բերայի նոր թատրոնին մօտ ծըխալճառի մը խանութը գող մտնելով, քսան ոսկւոյ դրամ ու գոյք գողցուել է :

— Եէնի-ձամիի նամակատան վրայ երրորդ յարկ մ'ալ պիտի կառուցուի իբր հեռագրատուն :

— Վիքայիս փաշա անցեալ ուրբաթ գիշեր ի Նշան-թաշ անձանթի մը կող-

մէ անշխառ յարձակում մը կրեց . անձանթը ձերբակալուեցաւ :

— Մախսուէի Նիւվիթիլէ շոգենաւը անցեալ օր Գարաքէօյի կամուրջին մօտենալու պահուն, Հալաճեան խանի քարափին զարնուելով, 50 ոսկւոյ վնաս պատճառեց :

— Ախէրայի մէջ Մէհմէտ և այլք Եանիլի վրայ յարձակելով վիրաւորեր ու կողոպտեր են զնա և իրենք ալ ձերբակալուել են :

— Ղալաթիոյ մէջ 4 անձինք Սէյտ Ալի անուն պարսիկ մը վիրաւորելով փախան :

— Բանկալիէն կառքով պոռոյտէ դարձած պահուն, Պամաճի Ռուրէն գիւնով վիճակի մէջ ստորճանակ պարսկելով, իրեն ընկերակցող սրճարանապետ Անտոնի ուրիշ կառքի մը մէջ եղած եօթնամեայ աղջիկը սրունգէն վիրաւորեց և ձերբակալուեցաւ . իսկ աղջիկը երկու ժամէն մեռաւ :

— Սայսայի մէջ 3600 տարուան գեղակերտ դամբան մը գտնուել է փլուխիկցի վեհապետի մը պատկանող :

— Բերայի Թրամուէյ փողոցին մէջ տան մը վրայ սենեակներ կ'աւելցուին, և դեռ տախտակամածները անհատատ վիճակի մէջ, տանը մէկ վարձակալին աղջիկը այդ սենեակներէն մին մտնելով, տախտակամածը կը փլչի և ինքն ալ խնալով յուսահատ վիճակի մը կը մատնուի :

— Անասուլի երկաթուղւոյն շինութեան պահուն էնկիւրիւսու և Իթանսու գետակներուն իրար խառնուած տեղը 50 մ. բարձր ժայռի մը մէջ փորուած եկեղեցի մը գտնուել է : Նախ 20 մ. երկայնութեամբ անցք մը կայ եղեր որուն երկու կողմը 3 մ. երկայնութեամբ 12 խցիկներ կը գտնուին : Անձաւին մօլից մէկ կողմը քարէ քանդակուած հրեշտակ մ'է միւս կողմը անորոշ պատկեր մը կը գտնուին : Ամէն կողմ քարէ վարդապարդեր կան : Դրան ձիջդ դիմացը, անցքին մէջ, բորբոքեալ սրտով խաչ մը կը տեսնուի : Բարձր սանդխով մը վեր կ'ելնուի . մատուան մէջ քարէ 4 օթարան և խորանին երկու կողմը մէկ մէկ մեծ քարէ աթոռ կան : Մայիս 1ին, ի ներկայութեան 250 գործաւորաց Հայ քահանայ մը պատարագ մատուցեր է :

— Հուգուգ լրագիրն անպայման կերպիւ դադրած է :

— Ֆրանսայի Ազգային տօնին առթիւ Ֆրանսական դեսպանատան մէջ ընդունելութիւնք կատարուեցան շորեքաթի :

— Անսառաց վիճակը Թուրքիոյ մէջ բարւոքելու համար Վսեմ. Պետրոս էֆ. Գուլումճեան ծրագիր մը յօրինած է :

— Բէժիի նոր շէնքին բացումը կը կատարուի այսօր:

— Դասրգիւղի բնակիչք հանրագործ վանդատ յայտնած են իրենց գիւղին եւ կամուրջին միջեւ հաղորդակցութեանց անբաւականութեան համար:

— Մուսանիա-Պրուսա երկաթուղւոյն վայրաշարժն անցեալ կիրակի Ա. ճէմէրի մօտ աւերուելով կեցեր և օգնութեան զրկուած վայրաշարժն ալ նոյնպէս աւերուել և այսպէս ուղեւորք գիւղերուն 4ին միայն կրցած են մայրաքաղաք ժամանել:

— Մախսուսէի վարչութիւնը փոքրօր Մանկօ ընկերութեան Բէքօ ֆօլօ շուքենաւը պիտի գնէ:

— Կարնոյ բանտը պիտի փոխադրուին Վանայ բանտէն՝ 9 դատապարտեալք:

— Արեւելեան Բուժէլիի հարկին յունիս ամսավճարը վճարուած է:

— Մուսանիա-Պրուսա երկաթուղւոյն յունիս 7-24 ունեցած հասոյթն է 50917 զրուշ, միայն ուղեւորաց փոխադրութենէն:

— Նիկովիդիոյ և Շիլէի կողմերն աստատակող Ալթը Բարմաք աւազակն անձնատուր եղած է:

— Սարանալի և Պէյլիք Տէրպէնտի միջեւ Պիլէճիկէն եկող կառախումբըն աքցանողին անուշադրութեամբ աւազարարձ վահօններու բաղկմբ է, բայց մեքենավարին ճարտարութեան չնորհիւ վնաս չէ պատահեր:

— Զմիւռնիոյ մէջ Իւշլաքիզատէ Սիւլէյման պէյ երգչուհւոյ մը սիրահարելով, անոր ականջ չկախելուն վրայ վեցհարուածեանով գնա ծանրապէս վիրաւորեր և ապա ինքզինքը սպաններ է:

— Նիկովիդիոյ դատական գործերը քննելու գացող խալիս պէյ դարձած է:

— Հանգստեան թուակ յատկացուած է 3000 զրուշ Տէրսիմի նախորդ կառավարիչ Մէհմետ էմին փաշայի և 833 զրուշ Բազէլի նախկին մէքթուպճի Սաֆիէթ պէյի:

— Զիսնէի փաշայի իրր ջրկանկիր զօրք ծառայութեան երեսնամեկին տութիւն Հունգարիայէն 64 անձինք եկած են սլաւոնապէս շնորհաւորելու համար զն. Վանուլիւն, որուն նուիրեցին երկճի փառաւոր կառք մ'և իւր պաշտօնին զինանշաններով բանուած գլխարկ մը: Զիսնէի փաշա ևս զրուշակ մը նուիրեց Հունգարիոյ ջրհանկիր զօրաց վաշարին պատգամաւորաց:

— Հայսուր-փաշայի կայարանին մէջ շարժումներ ընող վայրաշարժի մը ներքեւ մնալով մեռաւ դաշնակազար Պ. Բիէն Բօնուլի որ գծին վրայէն անցնելու պահուն ինկած էր:

— Զինուորականաց միւս պիտի հայթայթէ այս տարի վաճառական Եաքուպ էֆ. օխան 8 զրուշ 38 փարայի:

— Նիկովիդիոյ շրջակայքը Հազգը և Միմիշ աւազակները ձերբակալուեր են:

— Անձնասպան եղած է արջասպ խմելով՝ Գառը գիւղէն Սեդրակ Գասպեան:

— Նիկովիդիոյ էֆ. Փափազեան կարի մեքենայները փոխանակ երկուքի մէկ ոտքով շարժող գործի մը հնարելով, 15 տարուան մեռնչնորհ խնդրած է:

— Հնախաք աւելի սաստիկ կը ճարակի կեդրոնական Ասիոյ, Թուրքաստանի և Պարսկաստանի մէջ և տակաւ կը յառաջանայ դէպ ի Մոսկուա, կեդրոնական Ռուսիա: Արգէն մինչև Սարաթով հասած է, ուր օրական տասնեակներով կը մեռնին հնտախտէ վարակեալք, ինչպէս նաև ի Շամախ, Բեթրովսքի, Սամարա, Շուշի, Զարիցին եւ Երևան: Պաքուի մէջ մեռնողներուն թիւը հետզհետէ կ'աւելնայ, նոյնպէս և ի Տփլիս: Պաքուէն Պաթում գացող 500 գործաւորաց մէջ 2 հոգի մեռեր են և մնացեալները մեկուսացուեր են: Անդրկաւկասիոյ մէջ առողջապահական միջոցները շատ թերի են եղեր: Բեթերսպուրկի Դաղաքային խորհուրդը 200000 ռուպլ յատկացուցած է քաղաքին մաքրութեան համար: Արգէն Բեթերսպուրկի մօտ Բրասնօէ-Սէլյի բանակատեղւոյն մէջ տեղական հնտախտէ քանի մը դէպքեր ալ տեղի ունեցեր են: Հոնտան հասնող նաւու մը մէջ ալ երկու հոգի հնտախտէ մեռեր են: Իտալիա, Բորթուկալ և Ռումանիա զգուշական միջոցներ ձեռք առած են վարակեալ վայրերէ եկող նաւերուն համար: Աքեայի մէջ ալ տեղական հնտախտէ քանի մը հոգի մեռեր են և ամէն կերպ ազդու միջոցներ ձեռք առնուած են: Մայրաքաղաքին մէջ, հրամանաւ Վեհ. Սուլթանին, ներքին գործոց նախարար Վանֆ. խալիլ Բիֆաթ փաշա ամէն թաղերը պատելով, հանրային առողջութեան և մաքրութեան համար ամէն իրիտ հրամաններ կուտայ: Դաւաք չողենաւակ մ'ևս զրկուած է: Վարակուած տեղերէ եկած նաւերն այսուհետեւ Սինոպի մէջ նոր շինուած մաքրանոցը պիտի սպասեն և այլ տեղերէ եկողներն ի Դաւաք, ուր մաքրանոցին ետեւ հինգ մասերէ բաղկացեալ հիւանդանոց մը կը կառուցուի: Սե ծովու նեղուցէն դուրս մինչև Շիրէ և Իյնէատա շղթայ մը հաստատուած է, որպէս զի նաւերն արգիլուած տեղերը չհանդիպին և ուղղակի մաքրանոց երթան: Տրապիզոնի և Կարնոյ սահմանագլխոց վրայ մաքրանոցներ ու շղթայներ հաստատուած են:

Պատգամաբախուրիւնք. — խալիս պէյ Պէրութի կուսակալ, Ֆէրիք էա. հէմ փաշա՝ Բօսօփայի կուսակալ և զինուորական հրամանատար, Ալի Բիզա էֆ.՝ Կեափարի (Վան) և Մէհմետ Մահիր էֆ.՝ Արճէլի (Վան) գայմագամ անուանեցան:

Ասիւնանք. — Պէրութի նորընտիր կուսակալին, մաքսային ժողովայ նախագահ Աքիֆ պէյի և Կատպան էֆ.ի Պալայի աստիճան տրուեցաւ:

Պատգամեանք. — Կատպան էֆէնտի Մէհմետիէ Ա., Ֆրանսական դեսպանուհւոյն Շէֆաքաթ Ա., Սուլթանայի օմմ. փոխ-հիւպատոս Գրիգոր էֆէնտի Օմանիէյ Դ. Բարերգի գայմագամ Մէհմետ Իզզէթ պէյի Մէհմետիէ Դ. և Եոզկատի վաճառականներէն Յովհաննէս էֆ. Արսլանեանի Մէհմետիէ Ե. պատուանշանները տրուեցան:

Շեաղրամ. — Ներքին գործոց նախարարութեան խորհրդական Վսեմ. Ահմետ Բէֆիք պէյի Իմթիյազի ոսկի շքադրամ տրուեցաւ:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՔ

Անգլիական ընտրութիւնք այսօր կ'աւարտին. մինչև հիմա յառաջ եկած արդիւնքն է 243 պահպանողական, 235 կլատսթոնեան, 51 հակաբաւնեւեան, 44 միութենական-ազատական եւ 7 բաւնեւեան, այսինքն կատարուած 580 ընտրութեանց մէջ 287ը նախարարական և 293ը հակախախտարարական են: Դեռ 90 ընտրութիւնք կը մնան: Կլատսթոնեանք 70, պահպանողականք 15 և միութենական-ազատականք 7 ատրու չահած են:

Մ Ի Ր Ի Զ Ա Ն Ե Ա Ն

Լեզուաբանական վարժարան

Կրթական նախարարութեան մասնաւոր արտօնութեամբ վարժարանիս է. Տարւոյ Մրցանակաց և Վկայականաց բաշխման անդրանիկ հանդէսը պիտի կատարուի յառաջիկայ կիրակի 5 Յունիս ի ժամ 5, ի պարտիզի վարժարանիս, ընդ նախագահութեամբ Գեոր. Տ. Գրիգոր. Բիւս ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱԼԷԱՌՃԵԱՆ:

Հիմնադիր-Տնօրէն
Տ. Մ. ՄԻՐԻՃԱՆԵԱՆ
Կ. Պօլիս. Դուռ-գարու.
4 Յունիս 1892.

ԱՐԺԷՔ ԴՐԱՄՈՑ

Օմմ. լիւրս 100 զրգ. էն

Մէհմետիէ	108	1 զրգ. էն	102 20
Գառուգ. մէհմ.	106	25 զրգ. էն	89 45
Մանր մէհմ.	101	40 զրգ. էն	87 8
Մէթալիք	99	30 զրգ. էն	51 45
Հինգնոց	101	20 զրգ. էն	109 36
Մանէթ լիւրս 100 զրգ. էն			
Գանալիտէ	21	33 զրգ. էն	79 1/2
Թահվի. Օմմ.	81	25 զրգ. էն	48

ԱՐՏՈՆԱՏԻՐ Ա. ՄԱԿԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Իսկի-Զապիէ փողոց. Երև. 61